վաղ ուրացօղն, և Ռազօցիին որդին բազմութեամբ զօրաց տաճկականաց մտանելոց են ի դրանսիլվանիա, և եկեալ՝ հրաման եհան, զի ամենայն մաճառք զինուորիցին. (ենթ պատրուակի, թէ ընդդէմ տաճկաց մարտնչիցին, բայց վախճան նորա էր, զի ի գալ տաճկին և Ռազօցիին՝ սոքա պատրաստք լիցին առ ի մարտնչիլ ընդդէմ կայսերն)։ Բայց իբրև իմացաւ կայսրն՝ հրաման եհան, զի մի՛ ոք մաճառ զինուորիցի։ Եւ այս յոյժ բարի եղև վասն հայոց. քանզի առաւել երկնչիմք ի բնտանի թշնամեաց, այսինքն ի մաճառաց, քան թէ ի տաճկաց։ Իսկ վերոասացեալ Ջէնրալն իբրև իմացաւ, թէ ի յայտ եկին դաւաճանութիւնք նորա՝ էառ զթունալի ըմպելի, և այնպէս սատակեցաւ։ Դարձեալ լուաք թէ մօսզովն առեալ իցէ զՊէնտէր, և տաճիկքն տուեալք իցեն նմա զերկիրն մինչև ի սահմանս Թունային. բայց այսու պայմանաւ, զի յայսմիկ ձմեռան մնասցեն տաճիկքն յերկիրն յայն մինչև ի գարուն, իսկ ի գարնան ելցեն ինքեանք, և ռայէն մնասցէ անդ ի ներքոյ մօսգին։ Ոչ գոյ չաբաթ, յորում ոչ լսիցեմք զնորագոյն լուրս երկիւղալիցս. ուստի եմք ի մեծի նեղութեան և ի կասկածանս։ Դարձեալ ի յանցեալ թղթոջ աղաչեալ էի թէ գրիցէք ինձ, եթէ վէնէտիկցիք առեա՞լ իցեն զՄօռայ թէ ոչ. քանզի այսպէս լուեալ էի ի կեռլայ, թէ զկէսն Մօռայի առեալ իցեն....։ Իսկ ես մեծաւ բաղձանօք տեղեկանալ կամիմ զտպագրութենէ Մեկնութեան Աւետարանին և զյառաջացմանէ վանիցն, զոր կամէիք առնել ի Բատուա։.....

Մնամ պատրաստական յամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հ. Թէոդորոս Յով[հ]աննիսեան
կրօն. ի կարգէ Անգօնեան

Գրեցաւ յէլիզապէթ քաղաքն
1737 Նոյեմբերի 1

ՀԳ.

Բուզայեանի մահուան շուրջ կը գտնենք՝ Հ. Միքայէլի հետագայ նամակին մէջ՝ կարևոր մանրամասնութիւններ, որոնք կը ծառայեն միանգամայն անոր կենսագրութեան իբրև նորագոյն աղբիւրներ։ Բաց աստի՝ մեր նամակագիրը կու տայ ինչ ինչ ժամանակակից լուրեր։

Գերյարգելւոյ Աբբայ Հօրդ իմոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

Բազմաւ կարօտիւ և սիրալիր ողջունիւ յայտ լիցի գերյարգութեան քում, զի ահա հազիւ զկնի ութից աւուրց գալստեան իմոյ աստ, եղեալ եղէ ի վերայ պաշտօնի իմոյ յեպիսկոպոսէ տեղւոյս, և նախ վասն ստանցայ[1] գրել տալոյ և առնլոյ երկու ֆիօրին ծախս գնաց զափէլանի եպիսկոպոսի. այս այն է զոր զհայր յակոբն խոստովանեցուցեալ և զվերջի օծում տուեալ է նմա, և սա զամենայն ինչ գրեալ է թէ զգրեանս և թէ զլաթեղէնս, եդեալ ի մէջ տապանակի կնքեալ, հրամանաւ եպիսկոպոսին ոչ ետուն ինձ, այլ զբանալիս առեալ տարան և պահեն մերձ ինքեանց, և ասացին թէ տէկռէթօ գոյ, զի միսիօնարաց ինչն են սրբոյ ժողովոյն փռօփականտաֆիտոյ և ասացին թէ գրեա մեծաւորին քոյ, զի ծանուսցէ սրբոյ ժողովոյն, որ տայցեն զհրաման, տալ քեզ զայսոսիկ իրս....։ Խիստ վարանման և տրտմութեան մէջ եմ վասն պատերազմի թէ զինչ հետևելոց է, մինչ ի սոսա ուժ ինչ ոչ երևի այժմ. և տաճիկն զազանացեալ, ի կողմունս զռովայու ամայացուցեալ է, գերելով, սպանանելով և քանդելով։ Ասա ասեն թէ ի հե-

1. Աղաչանք, խնդիր.